ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 9-ին ժամը 11^{00} -ին Թումանյանի համայնքապետարանում տեղի կունենա Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Շամուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-085-0160-0001 ծածկագրում գտնվող 2.20711 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասի աճուրդ-վաճառք: Աճուրդի մեկնարկային գին սահմանել 5300000 (հինգ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Հողամասի աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%– ի չափով, մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:Հողամասի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան: Հողամասի որակական հատկանիշները՝ հարթ ռելիեֆ: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50% -ի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարը վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն:

3. Աճուրդի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Թումանյանի համայնքապետարան՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական 1: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Հեռախոս՝ 098-048-046